ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք. Երևան 15.12.2021թ.

Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը, ի դեմս Գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Աշոտ Ավագյանի, ով գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Էս Վե Քոմփանի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ նաև՝ Ընկերություն), ի դեմս Ընկերության լիազորված անձ Հայկ Սամվելյանի (ՀՀ անձնագիր՝ AU 0427345, տրված 30.08.2021թ., 011-ի կողմից, բնակության/հաշվառման հասցեն՝ ՀՀ, Երևան, Աճառյան փողոց, շենք 12/1, բնակարան 20) (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1 Կատարողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված գնով, նախատեսված ծավալներով Պատվիրատուին մատուցել Երևան քաղաքի Հ. Սահյան փողոցի թիվ 78/1 (նախկին Կովկասյան փողոցի թիվ 78) տանը կից ինքնակամ կցակառույցի չքանդված մասերը քանդելու և կատարված աշխատանքների արդյունքում առաջացած աղբի տեղափոխելու ծառայություններ (այսուհետ՝ Ծառայություններ):

2. Ծառայությունների մատուցման պայմանները

2.1 Ծառայությունները մատուցվում են Պայմանագրով և Պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող թիվ 1 հավելվածով սահմանված պահանջների հիման վրա:

2.2 Ծառայությունների մատուցման սկզբնաժամկետ է սահմանվում Պայմանագրի ստորագրմանը հաջորդող օրը: Ծառայությունները մատուցվում են Պայմանագրի ստորագրմանը հաջորդող օրվանից 10 օրվա ընթացքում:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1 Կատարողը պարտավոր է՝

3.1.1. Ծառայությունները կատարել բարեխղճորեն, ի շահ Պատվիրատուի, ժամանակին և Պայմանագրով սահմանված կարգով կատարել ստանձնած պարտավորությունները՝ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և թիվ 04227352 կատարողական վարույթի շրջանակներում կատարման ենթակա 25.05.2018թ. թիվ ԵԱՔԴ/4177/02/16 կատարողական թերթի պահանջներով:

3.1.2. Ծառայությունները մատուցել իր միջոցներով և նյութերով՝ Պատվիրատուի կողմից տրամադրված փաստաթղթերի և տեղեկությունների հիման վրա,

3.1.3. Ծառայությունների մատուցումից միակողմանի հրաժարվելու (Պայմանագիրը միակողմանի լուծելու) դեպքում այդ մասին առնվազն 30 օր առաջ գրավոր հայտնելով Պատվիրատուին:

3.2. Կատարողն իրավունք ունի՝

3.2.1. պահանջել Պատվիրատուից Պայմանագրով սահմանված ձևով, չափերով և ժամկետներում վճարել Պայմանագրով նախատեսված Ծառայությունների մատուցման համար,

3.2.2. անհրաժեշտության դեպքում հարցումների միջոցով ճշտել Ծառայությունների պատշաճ մատուցման համար իրեն անհրաժեշտ տեղեկությունները,

3.3. Պատվիրատուն պարտավորվում է՝

3.3.1. Կատարողին տրամադրել Ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ տեղեկություններ, փաստաթղթեր և ելակետային տվյալներ, Ծառայությունների կատարման համար անհրաժեշտ իրավական հիմքեր կամ դրանց պատճենները:

3.3.3. Ապահովել Կատարողի աշխատակիցների և նրա հետ համագործակցող անձանց անխափան մուտքը Ծառայությունների մատուցման տարածք:

3.3.4. վճարել մատուցված Ծառայությունների համար Պայմանագրով նախատեսված ժամկետներում և կարգով:

3.4. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.4.1. ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից Ծառայությունների մատուցման ընթացքը և որակը՝ առանց միջամտելու նրա գործունեությանը,

3.4.2. Կատարողից ստանալ պարզաբանումներ Պայմանագրով նախատեսված Ծառայությունների մատուցման ընթացքի վերաբերյալ,

3.4.3. Կատարողի մասնակցությամբ զննել և ընդունել մատուցված Ծառայությունները (դրա արդյունքը), իսկ Պայմանագրից ծառայության արդյունքի շեղումներ կամ այլ թերություններ հայտնաբերելու դեպքում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

3.4.4. Ծառայությունների մատուցումից միակողմանի հրաժարվելու (Պայմանագիրը միակողմանի լուծելու) դեպքում այդ մասին առնվազն 30 օր առաջ գրավոր հայտնել Կատարողին:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1 Ծառայությունների արժեքը կազմում է 500 000/հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ, որը վճարվում է Կատարողի բանկային հաշվեհամարին փոխանցման միջոցով ներկայացված հաշիվ ապրանքագրի հիման վրա՝ յուրաքանչյուր պատվեր հայտով սահմանված աշխատանքների կատարման հանձնման-ընդունման ակտի / հավելված 2 / ստորագրմանը հաջորդող 5/հինգ բանկային օրվա ընթացքում/:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայությունների ոչ պատշաճ կերպով մատուցման համար:

5.2. Կողմերը Պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. Գաղտնիությունը

6.1. Կատարողը պարտավորվում է պահպանել իր գործունեության գաղտնիությունը և չհրապարակել Պատվիրատուի վերաբերյալ մասնագիտական, գործարար, բանկային և որևէ այլ տեղեկատվություն (առևտրային, տեխնիկական, կազմակերպչական գաղտնիքներ,

գործարար ծրագրեր, հաշվապահական և ֆինանսական տվյալներ և այլն), ինչպես նաև չօգտագործել այդ տեղեկատվությունն իր անձնական կամ երրորդ անձանց օգտին:

6.2. Կատարողն առանց Պատվիրատուի համաձայնության չպետք է հրապարակի կամ տրամադրի որևէ տեղեկություն, ներառյալ փաստաթղթեր, նյութական կրիչներ և հիշողություն պարունակող այլ սարքավորումներ:

6.3. Կատարողը պետք է ապահովի Պատվիրատուի կողմից ստացված բոլոր տեղեկությունների գաղտնիությունը նաև իր աշխատավայրում՝ դրանք տրամադրելով միայն այն աշխատողներին, որոնց անհրաժեշտ են դրանք Ծառայությունների մատուցման համար:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցություն

/ֆորս-մաժոր/

7.1. Պայմանագրով և դրա հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը Պայմանագիրը կնքելու պահին չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել, իսկ այն ծագելուց հետո չեն կարող հաղթահարել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք ուղղակիորեն անհնարին են դարձնում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7.2. Կողմը, որի՝ Պայմանագրով ստանձնած պարտավորության կատարումն անհնարին է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, պարտավոր է Պայմանագրի մյուս կողմերին այդ մասին ծանուցել՝ անհաղթահարելի ուժ հանդիսացող հանգամանքներն ի հայտ գալու պահից 3-օրյա ժամկետում:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Կողմերը համաձայնվում և պարտավորվում են, որ Պայմանագրի կատարման և դադարեցման կապակցությամբ ծագող տարաձայնությունները և վեճերը ենթակա են լուծման փոխադարձ համաձայնությամբ, իսկ անհամաձայնության դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

8.2. Պայմանագրի բոլոր փոփոխությունները և լրացումները կատարվում են գրավոր և պետք է կրեն Կողմերի ստորագրությունները:

8.3. Պայմանագրի թիվ 1, թիվ 2 հավելվածները համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

8.4. Պայմանագիրը կնքվում է հայերեն լեզվով, երկու հավասարազոր օրինակից: Յուրաքանչյուր Կողմին տրվում է Պայմանագրի մեկական օրինակ:

9. **Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները**

ԿՈՂՄԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ք. Երևան, Հալաբյան 41ա
ՀՎՀՀ 01223338
Հ/Հ 900011288025
Կենտրոնական գանձապետարանի
գործառնական վարչություն

Գլխավոր քարտուղարի
պաշտոնակատար **Ա. Ավագյան**

Կ.Տ.

«ԷՍ ՎԵ ՔՈՄՓԱՆԻ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ք. Երևան, Ազատության 24/12,
ՀՎՀՀ՝00226963,
Հ/Հ 16600945555000

Հայկ Սամվելյան

Կ.Տ.

Հավելված թիվ 1
Պայմանագրի

Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը, ի դեմս Գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Աշոտ Ավագյանի, ով գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Էս Վե Քոմփանի» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության լիազորված անձ Հայկ Սամվելյանի (ՀՀ անձնագիր՝ AU 0427345, տրված 30.08.2021թ., 011-ի կողմից, բնակության/հաշվառման հասցեն՝ ՀՀ, Երևան, Աճառյան փողոց, շենք 12/1, բնակարան 20) (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից սույն հավելվածով հաստատում են Կողմերի միջև 15.12.2024թ-ին կնքված Ծառայությունների մատուցման պայմանագրով սահմանված և կատրման ենթական շինարարական աշխատանքների նկարագրության ձևը՝

ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԿՈԴԸ	04227352
ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՍՑԵՆ	Ք. Երևան Հ. Աճառյան 78/1
ԱՊԱՄՈՆՏԱԺՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՄԱԿԵՐԵՍԻ ՉԱՓ	2.5 մ
ԱՊԱՄՈՆՏԱԺՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՄԱԿԵՐԵՍԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ	Սեփականատեր էրոտը հարկադիր կերպով էրեմոթկերոցվա հեռացնի և պեղումների ավարտ և Հանձնի մի մաս

Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները

ԿԱՏԱՐՈՂ

«ԷՍ ՎԵ ՔՈՄՓԱՆԻ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ * 01223338 *

Հավելված թիվ 2
Պայմանագրի

Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը, ի դեմս Գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Աշոտ Ավագյանի, ով գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Էս Վե Քոմփանի» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության լիազորված անձ Հայկ Սամվելյանի (ՀՀ անձնագիր՝ AU 0427345, տրված 30.08.2021թ., 011-ի կողմից, բնակության/հաշվառման հասցեն՝ ՀՀ, Երևան, Աճառյան փողոց, շենք 12/1, բնակարան 20) (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից սույն հավելվածով հաստատում են Կողմերի միջև 15.12.21թ.-ին կնքված Ծառայությունների մատուցման պայմանագրով սահմանված աշխատանքների կատարված լինելու վերաբերյալ վերջնական արդյունքի հանձնման ընդունման ակտի օրինակելի ձևանմուշը՝

Կատարողական վարույթի կոդ	04227352
Կատարման աշխատանքների հասցե	ք. Երևան, Հ. Աճառյան 78/1
Կատարված աշխատանքների ծավալ	2,5 քմ (5644 մ³)

Հանձնողի տվյալները Հայկ Սամվելյան **Ընդունողի տվյալները**